# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ՋՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ջողաքար «11» օգոստոսի 2021թ.
ժ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Սարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 11-ին՝ ժամը 13:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «ԲԻԴԵՔ» ՍՊԸ | Ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա |
| 2 | «Լայն Շին» ՍՊԸ | Ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փողոց, 17շենք, բն., 90 |

3. Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Լայն Շին» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ.

- «Լայն Շին» ՍՊԸ-ի հայտի ապահովումը և ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված չէր հրավերով սահմանված կարգով, այնինչ պետք է պարտադիր ներկայացված լիներ: Տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել «Լայն Շին» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /ծանուցմանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել անհամապատասխանությունները:

Մյուս մասնակիցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էր հրավերով սահմանված վավերապայմաններին և պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Կասեցված նիստը վերսկսել 2021 թվականի օգոստոսի 13-ին ժամը 10-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ջողաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Սահմանված ժամանակահատվածում «Լայն Շին» ՍՊԸ-ն շտկեց գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները և մասնակցի հայտը գնահատվեց բավարար:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «ԲԻԴԵՔ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 2 | «Լայն Շին» ՍՊԸ | Համապատասխանում է |

Մասնակիցների գնային առաջարկը՝ ՀՀ դրամով

Ջողաքար համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԲԻԴԵՔ» ՍՊԸ | 102775000 | 75198745 | 15039749 | 90238494 |
| 2 | «Լայն Շին» ՍՊԸ | | 84000000 | 16800000 | 100800000 |

6. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը.

- էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ 2021 թվականին օգոստոսի 17-ին, ժամը 13-30-ի ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ջիլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում գտնվող Ջիլաքարի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը, ժամը 14-00-ին, գ. Ջիլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ______________________ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ ______________________ Պ. Սարիբեկյան

______________________ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ ______________________ Ժ. Խաչատրյան